

6306



Կր. Կարմիր անցք կարգի անարժեքներով

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Անկերածինը

№ 117

2160

6306


ՔՆԱԾ ԳԵՂ ԵՑԿՈՒՀԻՆ

ՀԵՔԵԱԹ



Մանկական գրադարան

(Спящая красавица)
(Сказка)



$$\begin{array}{r}
 58.75 \\
 + 92.55 \\
 \hline
 148.30
 \end{array}$$


$$\begin{array}{r}
 3925 \\
 + 12025 \\
 \hline
 141250
 \end{array}$$

1

$$\begin{array}{r}
 \cancel{3925} \\
 + \cancel{12025}
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 3925 \\
 + 12025 \\
 \hline
 15050
 \end{array}$$

Дозволено Цензурою. Тифлисъ, 12 Декабря 1896 г.



ՔՆԱԾ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Կար չը կար, ժամանակով մի թագաւոր ու մի թագուհի կար: Այս թագաւորն ու թագուհին երկար ժամանակ երեխայ չունէին: Վերջը Աստուած մի աղջիկ տուեց: Թագաւորը շատ ուրախացաւ և մի այնպիսի կնունք արաւ, որ լեզուով պատմել կարելի չէ: Որքան իշխան, մեծ մարդ, զօրապետ կար՝ ամենքին էլ կնունքի կանչեց: Եօթը հատ կախարդ կին էլ կար այդ երկրում. նրանց էլ հրրաւիեց և շատ պատիւ տուեց, որպէս զի դրանք երեխային մի մի շնորհք տան և երեխան բախտաւոր լինի:

Ճաշի ժամանակ եօթը կախարդները նստեցին թագաւորի և թագուհու կողքին: Թագաւորը նրանց համար եօթը հատ ոսկի աման և եօթը հատ ոսկի բաժակ էր շինել տուել, որ ոսկի ամաններից ուտեն ու խմեն: Երբ կեր ու խումն սկսեցին՝ մէկ էլ որտեղից ասես մի կաղլիկ պառաւ, գաւազանը ձեռքին, թրխ-թրխկ ներս մտաւ ու գնաց եօթը կախարդների մօտ:

Այս պառաւն էլ կախարդ էր. ապրում էր մութ անտառում, մի աշտարակի մէջ: Յիսուն տարի էր, որ նա նստել էր այնտեղ, դուրս չէր գալիս, մարդու աչքի չէր երևում: Կարծել էին թէ նա մեռել է, այս պատճառով էլ թագաւորը նրան չէր կանչել:

Թագաւորը նրանից ներողութիւն խնդրեց, ասեց չենք խմացել. չետոյ համեցէք արաւ, նստեցրեց եօթը շահէլ կախարդների կողքին: Բայց ոսկի աման ու ոսկի բաժակ էլ չը կար որ դնէին նրա առաջ. բերին արծաթի աման ու բաժակ դրին: Պառաւր բարկացաւ, չրթունքը կծեց ու ասեց. «Հա՛, սրանք ինձ ծաղրում են»: Քիթի տակ մըրթմըթաց, աչք անեց այս ու այն կողմը:

Չահէլ կախարդներից մինը լսեց պառաւի մըթմըթոցը և հասկացաւ, որ նա ուզում է մի վատ բան անել: Հէնց որ հացից վեր կացան՝ Չահէլը շուտ արաւ, գնաց երեխալի օրօրոցի մօտ, վարապոյրի՝ ետևում թագ կացաւ: Մտքումն ասում էր, որ եթէ բան է, պառաւը գալ ու երեխալին չար աչքով տալ՝ ինքը օրհնանքով նրա չար աչքը ճաքեցնէ:

Մնացած վեց Չահէլ կախարդները եկան օրօրոցի մօտ: Առաջինը երեխալին գեղեցկութիւն խոստացաւ, երկրորդը՝ խելք, երրորդը՝ բարի հոգի, չորրորդը՝ հարստութիւն, հինգերորդը՝ լաւ սրար գալու շնորհք, վեցերորդը՝ երգելու շնորհք: Հերթը հասաւ սրառաւ կախարդին: Նա մօտեցաւ օրօրոցին, իր կախարդական դաւադանը դիպցրեց նրան և ասաց.

— «Թագաւորի աղջիկը երբ տասն ու հինգ տարեկան դառնայ, ձեռքը ծակէ իլիկով և մեռնի դրանից»:

Ասաց ու անհետացաւ: Թագաւորը, թագուհին և նրանց հետ բոլոր հիւրերը հէնց որ այս խօսքերը լսեցին՝ լաց եղան: Մէկ էլ վարապոյրի ետևից դուրս եկաւ եօթներորդ Չահէլ կախարդը և ասաց.

— «Թագաւորն ազրամ կենայ, շատ միտք մի՛ աներ: Պառաւ կախարդի ամսածը ես չեմ կարող ոչնչացնել, բայց

4
235
265
կը փոխեմ: Թագաւորի աղջիկը, ճշմարիտ է, ձեռքը կը ծակէ իլիկով, բայց դրանից չի մեռնի: Հէնց որ ձեռքը ծակէ՝ խոր քնի մէջ կընկնի ու հարիւր տարի քնած կը մնայ: Նրան քնից կը զարթեցնէ մի թագաւորի տղայ և կը դառնայ նրա փեսան»:

Թագաւորը այս խօսքը պահեց իր մտքում: Ուզում էր որ իր աղջկան ազատէ այն փորձանքից: Ի՞նչ անէ, ի՞նչ չանէ: Հրաման տուեց որ իր տէրութեան մէջ ո՛չ ճախարակ լինի, ոչ իլիկ: Հրամանը, իհարկէ, կատարուեց:

Թագաւորի աղջիկը մեծացաւ. բարի կախարդները ինչ շնորհք որ խոստացել էին՝ բոլորը կատարուեց: Նա այնպէս գեղեցիկ էր ու խելօք, այնպէս սիրուն երգում էր ու պարում, որ ոչ ուտէիր, ոչ խմէիր, միայն նրան մտիկ տալիր: Իսկ տասն ու հինգ տարին որ լրացաւ, թագաւորն ու թագուհին փառք տուին Աստուծուն, թէ փորձանքը անցաւ:

Մի օր թագաւորի աղջիկը գնաց պալատի բոլոր սենեակները ման գալու, որ ինչ կայ չը կայ տեսնէ: Ման եկաւ ամեն տեղ, չետոյ բարձրացաւ վերին չարկը. կտուրի տակ մի փոքրիկ սենեակ կար, դուռը բաց արաւ: Ի՞նչ տեսնէ. — նստած է մի պառաւ կին ու թել է մանում:

— «Տատի, այդ ի՞նչ ես անում»:

— «Մանում եմ, հոգիս», պատասխանեց պառաւը:

— «Թող ես էլ փորձեմ, տատի»:

Տատը թոյլ տուեց: Հէնց որ աղջիկը իլիկին մօտեցաւ՝ ձեռքը ծակեց և ընկաւ խոր քնի մէջ: Տատը շատ վախեց, դուրս վազեց ու կանչեց: Թագաւորը, թագուհին, պալատի բոլոր մարդիկ վրայ հասան, որքան դէս ընկան, դէն ընկան՝ թագաւորի աղջկան զարթնացնել չը կարողացան: Այն ժա-

3619



մանակ թագաւորը միտը բերաւ չար կախարդի ասածը: Էլ բանը բանից անցել էր: Թագաւորի աղջկան տարան իր ննջարանը, պառկեցրին:

Այդ միջոցին բարի կախարդը, որ ասել էր թէ թագաւորի աղջիկը հարիւր տարի կը քնի՝ եօթը սարի, եօթը ձորի ետևումն էր գտնուում: Հէնց որ իմացաւ այս անցքը՝ նստեց իր հրեղէն կառքը և մի ընկուած եկաւ հասաւ: Նա հրամայեց, որ քնած աղջկան թաւիչեայ սակեթել շորեր հագցնեն և դնեն պալատի ամենալաւ սենեակում: Յետոյ բարձրացրեց իր ձեռքի գաւազանը, — և իսկոյն պալատի մէջ ինչքան մարդ, անասուն, հաւք կար՝ ամենքը քնեցին:

Թագաւորն ու թագուհին նստել էին մրգեղէն ուտելու, այդպէս էլ քնեցին. նրանց ետևում կանգնած էր ծաղրածուն, հանաքներ էր անում, — նա էլ քնեց ծիծաղը բերանին. սպասաւոր երեխան, որ ափսէով քաղցրաւենիք էր մատուցանում՝ ափսէն ձեռքին քնեց՝ գլուխը կախ: Մառանում մատուռակը գինի էր ածում. նա էլ քնեց, մի ձեռքում գինու շիշ, միւս ձեռքում բաժակը բռնած. գինին էլ քնեց, այլևս չը թափուեց: Խոհանոցում խոհարարը ձեռքը լետ էր տարել որ աշակերտին ապտակ տայ, թէ ինչո՛ւ խմորեղէնը թափեց. երկուսն էլ աղպէս քնեցին: Աշակերտը կոխել էր սպիտակ կատուի ազին. կատուն մլաւում էր ու հէնց բերանը բաց քնեց: Քնեցին չները պալատի պատի տակ. քնեցին և նրանց մօտ կանգնած աղաւնիները: Կարճ ասենք — էլ շունչը բերանին արարած չը մնաց, որ չը քնի:

Բարի կախարդը մի անգամ էլ բարձրացրեց իր գա-






85 39

Edmund Spenser

STAMPED IN RED INK
MUSEUM OF THE
MUSEUM OF THE



26



8001

որը լրանում էր հարիւր տարին՝ թագաւորի աղջկայ քուն մտնելու օրից: Երբ թագաւորի տղան մօտեցաւ՝ փշերն ու տատասկները յանկարծ սիրուն ծաղիկների փոխուեցին ու նրա առաջ ճանապարհ բացին:

Թագաւորի տղան ներս մտաւ: Ի՞նչ տեսնէ: Ուր որ գնում է, ուր որ նայում է՝ աչքին քնածներ են երևում: Չարմանքից քիչ էր մնում որ քարանայ, ուչքից գնայ: Բայց խելքը գլուխը հաւաքեց, չլվախեց, ման եկաւ ամեն տեղ: Վերջը մտաւ այն սենեակը, ուր անկողնում պառկած էր թագաւորի աղջիկը: Նա քնած էր: Անպէս աննման սիրուն աղջիկ թագաւորի տղան իր կեանքում ոչ տեսած էր, ոչ լսած: Խելքը գնաց, բերանը բաց մնաց: Կռացաւ որ աղջկայ թուշը պաշի, բայց աղջիկը աչքերը բաց արաւ: Նա նայեց թագաւորի տղային ու քմծիծաղ տուեց. հէնց ասես ճանաչում էր նրան, հէնց ասես երէկ էր երազում տեսել նորան:

Յետոյ ասաց.

— «Թագաւորի տղայ, շատ ժամանակ է, որ ես քեզ սպասում եմ. ահա եկար»:

Իսկ թագաւորի տղան պատասխանեց.

— «Ես շատ ուրախ եմ, թագաւորի աղջիկ. իմ բախտն էր, որ գամ քեզ զարթեցնեմ»:

— «Ես քեզ շատ եմ տեսել երազումս, և շատ վաղուց էի քեզ սպասում», նորից ասաց աղջիկը:

Ու վեր կացաւ տեղից, ձեռքը տուեց թագաւորի տղային: Երկուսը միասին գնացին դահլիճը:

Յանկարծ ամենքն սկսեցին զարթնել և շարժուել: Թագաւորն ու թագուհին աչք բաց արին, յետոյ միւսներն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

լազանք. իսկոյն պալատի չորս կողմում մեծ-մեծ ծառեր,
փուշ ու տատասկ բուսան: Նրանք միմեանց փաթաթուե-
ցին, պատ կազմեցին ու բոլորուեցին պալատի շուրջը,
ծածկեցին այնպէս, որ ոչ մի մարդ, ոչ մի գազան չէր
կարող մտնել և իմանալ, թէ ի՞նչ կայ այս քնած
աշխարհում:

Այսպէս հարիւր տարի անցաւ:

Մի օր մի թագաւորի տղայ որսի եկաւ այս կողմերը
և շատ զարմանալի բաներ լսեց փշերով ծածկուած պա-
լատի մասին: Մէկն ասաց. «Այտեղ գիշերները հաւաք-
ւում են կախարդները և վհուկները»: Միւսը թէ՛ «Չէ,
կախարդներ չրկան, այնտեղ ապրում է աժդահայ մարդա-
կերը, որ փոքր երեխաներին բռնում է ու ուտում»:

Թագաւորի տղան չէր իմանում, թէ որին հաւատայ:
Վերջապէս մի ծեր մարդ պատահեց և ասաց.

— «Ես իմ պապերից լսել եմ պալատի պատմութիւնը:
Այնտեղ քնած է թագաւորի գեղեցիկ աղջիկը: Մի ժա-
մանակ մի թագաւորի տղայ պիտի գայ, գեղեցիկ աղջ-
կանը զարթեցնէ ու պսակուի նրա հետ: Շատ թագաւորի
տղերք են եկել, բախտ են փորձել»:

Զարմացաւ թագաւորի տղան և պատասխանեց.

— «Ես էլ բախտս կը փորձեմ. ո՞վ գիտէ, կարելի է
հէնց ես եմ այն թագաւորի տղան, որ պիտի զարթեցնեմ
գեղեցիկ աղջկան»:

— «Մեղք ես, թագաւորի տղայ, մի՛ գնար», ասաց
ծերունին. «ով գնացել է այնտեղ՝ էլ չետ չէ դառել»:

Բայց թագաւորի տղան վախկոտ չէր ու գնաց:

Պատահմունքը այնպէս էր եկել որ հէնց ուղիղ այդ


էլ վեր կացան, միմեանց նայեցին և լաւ ծիծաղեցին:
Ամեն մէկը իւր գործը շարունակեց: Խոհարարը ապտակը
տուեց աշակերտին. աքաղաղները կանչեցին, կրակը վառ-
ուեց օջախում, կերակուրները սկսեցին եփ գալ: Թագա-
ւորն ու թագուհին իրանց աղջկան հարց ու փորձ արին,
թէ ի՞նչպէս եղաւ այս բանը: Նա էլ պատմեց, թէ այս-
պէս ու այսպէս. եկաւ թագաւորի տղան և իրան զար-
թեցրեց: Աղջիկը համ պատմում էր, համ կարմրում: Թա-
գաւորն ու թագուհին շատ ուրախացան: Թագաւորը
ասաց.

— «Բարի կախարդի խօսքը կատարուեց. թագաւորի
տղան քեզ զարթեցրեց. նա քոնն է, դու նրանը»:

Հէնց այդ օրն էլ նրանց նշանեցին: Ապա հարսանիք
արին եօթն օր, եօթը գիշեր:

Նրանք հասան իրանց մուրազին. դուք էլ հասնէք
ձեր մուրազին:





12-10-32
1285 - 10 = 1275

1008 / 30
30.9r
2,24p

100,800
lt ————— B

nya paku... 2

$$\frac{x+6}{2} = 2x \left(\frac{5-8}{7} \right) + 2x$$

$$\frac{x+5}{2} = 2x \left(\frac{6-8x}{7} \right)$$

28 28
12 16
56 168
28

$$7x+35 = 28x(12-16x) \quad \frac{28}{336} \quad \frac{28}{448}$$

$$7x+35 = 336x - 448x^2$$

329x
12
9


$$448x^2 - 329x + 35 = 0$$
$$x = \frac{329 \pm \sqrt{\dots}}{2}$$

9 9 9

9 2 2 2 2

$$\begin{array}{r}
 225 \\
 + 575 \\
 \hline
 900
 \end{array}$$


$$\begin{array}{r}
 225 \\
 + 575 \\
 \hline
 900
 \end{array}$$



Mary Spohn



2



ՄԻ Հայաստանի Դրամարան



MAL006949

